ՆԱԽԱԳԻԾ

ՀՈՒՆԻՍ 2025թ.

ՎԱՀԱՆ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻ, ՀԱՅԿ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻ, ԴԱՎԻԹ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼ ԵՎ ՆԱՐԵԿ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈԳԱԲԱՐՁՈՒ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 33-րդ, 34-րդ, 35-րդ, 36-րդ, 37-րդ և 38-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 134-րդ, 135-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի 02-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 9-րդ կետի երկրորդ ենթակետով, հիմք ընդունելով՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ համայնք Փարաքար գյուղ Մերձավան 4-րդ փողոց տնակ 9 հասցեի բնակչուհի Գայանե Խաչատուրի Հովհաննիսյանի 2025 թվականի հունիսի 18-ի թիվ 2909 դիմումը, Հայաստանի Հանրապետության Փարաքար համայնքի «Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի» 2025 թվականի հունիսի 25-ի թիվ 3-րդ նիստի թիվ 13 արձանագրությունը.

Որոշում եմ՝

1.Գայանե Խաչատուրի Հովհաննիսյանին (ծնված՝ 1970 թվականի օգոստոսի 19-ին, անձնագիր՝ AP 0685299, տրված 2016 թվականի դեկտեմբերի 27-ին , 057-ի կողմից) նշանակել հոգաբարձու՝ անչափահաս Նարեկ Անդրանիկի Հովակիմյանի (ծնված՝ 2009 թվականի դեկտեմբերի 4-ին, ծննդյան վկայական՝ ԱԲ 040919) նկատմամբ, իսկ անչափահասներ Վահան Անդրանիկի Հովակիմյանի (ծնված՝ 2013 թվականի նոյեմբերի 10-ին, ծննդյան վկայական՝ ԱԲ 288442), Հայկ Անդրանիկի Հովակիմյանի (ծնված՝ 2016 թվականի ապրիլի 22-ին, ծննդյան վկայական՝ ԱԲ 512820), Դավիթ Անդրանիկի Հովակիմյանի (ծնված՝ 2018 թվականի հոկտեմբերի 20-ին, ծննդյան վկայական՝ ԲԱ 044126) նկատմամբ նշանակել խնամակալ:

2.Հսկողություն սահմանել Գայանե Խաչատուրի Հովհաննիսյանի (ծնված՝ 1970 թվականի օգոստոսի 19-ին, անձնագիր՝ AP 0685299 տրված 2016 թվականի դեկտեմբերի 27-ին, 057-ի կողմից) գործողությունների նկատմամբ:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Փարաքար համայնքի ղեկավարին՝

որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մեկ ամսվա ընթացքում կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մինչև անչափահաս երեխաների մոր՝ Նունե Ռուբենի Հովակիմյանի՝ Ռուսաստանի Դաշնությունից վերադառնալը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գայանե Խաչատուրի Հովհաննիսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱԼՈՌՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

1. Համայնքի ղեկավարի տեղակալ _____

2. Իրավաբանական բաժին _____

3. Սոցիալական աջակցության և առողջապահության հարցերի բաժին _____